

## ԳՈՐԳԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԱՐՔՈՒՆԵԱՑ ՄԷՋ

Անտարակոյս Հայ արքունիքը չէր կահաւորուած մեր արդի, եւ ոչ ալ հին եւրոպական ոճով, այլ խիստ հաւանօրէն Պարսկական արքունեաց նման: Եւ ոչ ալ տարակոյս ունենալու ենք թէ Հայ պալատին զլիաւոր կահկարասին զորդեր եւ կապերաներ էին: Հին Հայ մատենագրական վկայութիւններէն դատելով կրնամ համարձակ ըսել որ Հայ արքունեաց մէջ զորպէս կը զործածուէր բոլոր առօրեայ եւ բացառիկ սովորութեանց մէջ:

Իբր հնադոյն վկայութիւն առաջ կը բերեմ 369 թուականին պատահած պատմա-աւանդական դէպք մը՝ պատմուած Փաւստոս Բիւզանդէ, որուն համեմատ Հայոց Դրաստամատ իշխանը Պարսից Շապուհ արքայէն թոյլտուութիւն կը խնդրէր երթալ եւ դաւով գերուած Հայոց հայրենասէր Արշակ արքային, որ Պարսից Անյուշ կոչուած բերդ-բանտը կը պահուէր, «լուանալ զգլուխ նորա եւ օձանել, եւ ազուցանել նմա պատմուճան, եւ արկանել նմա ըզգմականս, եւ դնել առաջի նորա խորտիկս...»: Եւ ապոյց նմա զպատմուճան ազնիւ. եւ էարկ նմա բազմականս եւ բազմեցոյց զնա. եւ եզ առաջի նորա ընթրիս բատ օրինաց թագաւորաց»<sup>(1)</sup>:

Բիւզանդի վկայութենէն որոշ կ'երեւայ որ Հայ Արքաներուն հայրենական սովորութիւնն էր բազմական (զորպէս) սիւսել, որուն վրայ կը փոէին ճաշու սիւսոցը եւ սեղան կը յարդարէին: Սակայն ասիկա միայն հայոց յատուկ սովորութիւն մը չէր, այլ զրեթէ բոլոր Մեր-

(1) Պատ. Հայոց: Ս. Ղազար, 1914, էջ 262-263: Դարձեալ Բիւզանդ կը վկայէ որ Հայոց Մանուէլ սպարապետը Վարադատ Հայոց թագաւորը կ'ամբաստանէր «դու կալար ի բազմականի խեղդեցեր զնա» (էջ 303): Իր Մուշեղ եղբայրը, երբ վերջինս Հայոց արքային մօտ կը ճաշէր: Բիւզանդի ոճէն կ'երեւայ որ ճաշու բազմականի կամ զորպէս վրայ սպաննել կամ անձնասպան ըլլալ մեծ սրբազոյժութիւն էր Հայոց մէջ, ըստ երեւոյթի աններկի կերպով այլանելի:

1673ին իսկ զեռ Վրաց մէջ արքունի խնճոյքները Բիւզանդի դարեր առաջ նրկարագրածին պէս զեանատարած զորդերու վրայ կը կատարուէր: John Chardin այդ թուականին Թիֆլիս այցելութեան ներկայ կ'ըլլայ արքունի խնճոյքի մը, ուր սրահին «զեռներ ծածկուած էր զեղեցիկ զորդերով»: (The Travels, London, 1686, p. 226).